



[Faint bleed-through from the reverse side of the page]

9. 1. 1. 4.

ԼԻՄ ԱՆԱԳԱՏ
(ՏԵՍ Թ/Լ 5.)

(Sb. 10. 1. 5.)

վանքէն այս առաջարկութեան համար հա
լածուած . . . վարդապետէն կրնայ իմա
նալ, մեր միտքը վանքը գոցել կամ միաբան
ները պարսուելով դուրս հանել տալ չէ, այ
նանց ընթացքը եթէ մանրամասն չէ գտնէ
հարեւանցի կերպիւ մի նկարագրելով հե
տաքերի ու աղատամիտ անձանց ուշադրու
թիւնը հոն գրաւել է, որպէս զի իմ անա
պատը իր նսեմացած փառքը վերստին ձեռք
բերէ և ազգին լուսաւորութեան և յառա
ջագիմուծեան կեդրոնատեղի մի ըլլայ Հա
յաստանի մէջ, բայց և դարձեալ սա ալ կը
սեմք որ շնորհակալութեան արժանի կետ մի
ունի այս վանքը որ միւս վանքերէն փոքր
ինչ կը տարբերի և կրնամ ըսել ալ որ նոցա
ու ասոր մէջ մեծ վիճ կայ: Նաև ներդու
թիւն կը խնդրեմ այն վանքի մէկքանի աղա
տամիտ և ուսումնասէր միաբաններէն որոց
սրտերը վշտացուցի նախ ընդհանրապէս խօ
սելով:

(C₁-2-1-1)

ԾԱՆՈՒՅՄՈՒՆՔ

ԿԻԹԱՌ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՆԴԵՐ ՀԱՅԿԱԶՆ ՕՐՈՐԴԱՅ

Սեր յուլիս 1 թուով ծանուցեր էինք որ այս անունով Հանդէս մի կայ մամուլի տակ, ուստի այսօր խնդուածեմք սրտի նորա՝ առաջին թիւը ընդունելով չեմք կրնար անտարբեր մնալ այսպիսի մէկ օգտակար ու անդրադարձնելի ձեռնարկութեան մի վրայ քանի մի խօսք ընել, և կը յուսամք որ գոհ սիրտի ընելք մեր արդայ ընթերցողները այս մասին:

19 որդ գարուն մէջ վերջապէս Հայը իր բազմադարեան ընէն սթամբուլցաւ ու սխաւ իր նախնի փառաց նախանձախնդիր ըլլալ հաստիտորակութեան և ուսման լատտերներ կազմելով: Փնտռելի Հայը այս լատտերը որ անհագ արեւոյց կնգուղին (վեղար) ու սեւ վերարկուն տակ կը կարծուէր և միայն նոցա վաճառքը համարուած էր, գիտցաւ զինքն (ի բաց առեալ քանի մի մանուկներն) քանրարածագոյց մշակներ էին, և այս ճըրագը վերարկուն տակ ծածկել կուզէին որ անէն զերեւան չեկնէին այն գործքերը ինչ որ կրնէին մթութեան մէջ: զի որ զար գործէ առեալ զայս զի մի յայտի լիցին գործը իւր համադրեցաւ զի այս քանրարը շահեցնելու և արդիւնաւորելու համար հաւատարիմ սեղանաւորներու պէտք էր տալ, և այս ճրագը աշտանակի վրայ դնել, այն է կանանց ձեռքը յանձնել այս լատտերը որպէս զի լայ տեսցեն որ ի տանն իցեն, այն տանն գոչեց բարձր ձայնով « աղջկանց քաւարակութիւն, աղջկանց քաւարակութիւն »: Այս ձայնը որովհետեւ ճշմարտութեան ձայնը գտաւ, շատ տեղ մեծ ընդունելութիւն, և հասկըցուց զի ընդ միայ հարկը արդիւնաւորելու պարտաւորելիքը կանանց մտոյ ագտարակն է միայն, ուստի սկսան շատեր այս ճշմարտութեան ձայնին հետեւել, շատ նախապաշարմանց անարի զօրքեր գեմ ելան, բայց յաղթեցան չարաչար, որովհետեւ խաւարին տակ ծածկուած մէկը երբ յանկարծ լուսոյ գեղեցիկութիւնը տեսնէ, անհնար է որ ամեն ճիգը չի թափէ զայն վայելելու համար ամեն արգելքներու դիմադրութեամբ:

Ինչ շատ տեղեր հեղհեղեղ աղջկանց համար յատուկ վարժարաններ բացուեցան, գիմնասիան, սերմերը նոցա սրտերուն մէջ ցանուիլ սկսան, և քիչ առեւնէն ընդ միայ երեսուն արդիւնը ցուցուցին. ապացոյց մի կը պահուէր այս արգելանքը և ահա այսօր այն ալ տեսնուեցաւ մեծ բազմաւորութեամբ:

Եթեւոր, որ ապացոյց մի է Հայ յառաջադիմութեան և լուսաւորութեան, մեծ յոյս ունիմք որ այս ճշմարտութեան ձայնը աղջ

կանց դաստիարակութիւնը իր նուրբ ու գողորիկ թիւերով սիրտ հնչեցնէ ամեն տեղ և Հայ օրիորդները գիտութեանց պարտեզը սիրտ հրաւիրէ, որք պատրաստ են նորա ներդաշնակութեան աւելնելիք ըլլալ և զըօսնելով օգուտ քաղել:

Եթեւոր նախնիքն են օրիորդաց դաստիարակութիւն, բարոյական և բանասիրական յօգուածներ, հայրենասիրութեան յորդորանք, աղքատին երգեր, պատմութիւն, ստա նաւորներ և առակներ: Ար հրատարակուի ամիսը անգամ մի, գինը 40 դահեկան, ստորագրութեան տեղն է մեծ: Այս խան Պարտիզանեան Պողոս աղային սենեակը թիւ 2 վերի յարկը, խմբագրութիւն Լլլիս Տաղաւ մաճի կարապետեանի Հայկուհայ:

Ար մաղթեմք ի սրտէ տար երկինք որ Եթեւոր իր անդրանկութեամբ անդրանիկ ընդունելութիւն մի գտնէր, որուն յոյս ունիմք որպէս զի կարող ըլլայինք փոխանակ աւիոր անգամ մի. գէթ երեք չորս անգամ նոքա քաղցր ներդաշնակութիւնը լսել:

ՕՆՓԻԻՌ

ՀԱՅՐԵՆԵԱՅ

Այս Լուսն պարբերական հնդեառաւ նորեայ Հանդէս մի լուսաւորութեամբ խմբագրութեամբ, արդոյ Պ. Ս. Սինաս. Հայկ Վաբանաճեան, որոյ վերոյ ունեցած դիտողութիւնին հետեւեալ թւոյն կախուած թողուլ: Վեցամսեայ գինն է 40 դուրուշ, ստորագրութեան տեղերն են Վալթիա Զ. Սինհեախեան տպարանը: Վ. Վալթիա Զուլաճի խան վերի յարկը թիւ 28 Նիլաճի Հալեւորեան Պ. Սինհեան սենեակը, ուր կը գտնուի Հանդիսի գլխաւոր գործակալ Պ. Կոմիտաս թոսուեանը: Լ. Սինհալի վերանալութեան թանգարանը:

Ար փութեամբ ծանուցանել մեր արդոյ ընթերցողաց, որ Հանդիսի գործակալութիւնը Պ. Կոմիտաս թոսուեանին յանձնուեցաւ, պակաս թիւեր և Հանդիսի վերաբերեալ գործոյ մի համար տեղք է անու հետ տեսնելուի: Սինհալային կը ծանուցուի որ ձեռագիր ընկալալիք ընդունելի չէ, և ստակ չ'տրուի:

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԻՆ

ԹԱՂԱՆՍ Պ. ՊԵՌԵՆՏ

ՍԱՐԳԻՍ ԲԱՐՍԵՆԱՆ

ԻՂԱԼԱԹԱԿ ԳՈԼՍԱՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԷԷԷՏԻՍԵԱՆ

ՀԱՅՈՑ ԵՆԵՂԵՌՈՅ ՓԵՂՈՅ ԹԻՒ 47